


ԲԱՆՎ. ԳՅՈՒՂԱՅ. ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 20
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ԳԼԽ. ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ա. Լ. Ա. Զ. Ա. Ն

399

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՐԵՎԱՆ,
1929 թ.



Կ-28

ԲԱՆՎ. ԳՅՈՒՂ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 20

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 20

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1929

399

ԱԼԱԶԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

A I
5120



Հր. № 964: Գրասեղվար № 1828 (բ): Տիրամ 2000.

Պեհերատի առաջին տպարան վաղաբշտատում.

Պատվեր № 67:

1211

ՄԱԳԻԼՆԵՐՈՒՄ

(Բնկերոջս պատմածից)

I

Մեր տունն ընկած էր քաղաքի հեռու և խուլ մի փողոցում:

Փողոցն էլ ինչ փողոց, նեղ, կեղտոտ, պատերն իրար մոտ ու ծումոված: Անձրև որերին՝ ցեխ, արև որերին՝ փռչի ու աղբ:

Մեր տունը—բայց ինչո՞ւ մերը, տունն սկիզբի մերը չէր. նա ուներ իր տերը, մի խանութպան էր—Ակոբ գալի ելին ասում: Հաստ, փքված փորով, մութ ու խոժոռ մի մարդ: Ուշունցն ու պապիրոսը շրթունքներից միշտ անպակաս: Մեզ տվել էր մի գետնափոր նկուղ: Վարձքը հո տալիս ու տալիս ելինք, բայց պայման կար, վոր մաշրս նրանց լվացքն աներ, ջուրը կրեր և հաջրս էլ ձմրանը սրբեր նրանց տափակ կտուրները:

Փողոցում պղտոր մի առվակ էր հոսում: Ինչքան ենք խաղացել նրա ափերին պըպղած, հարևան չերեխաների հետ: Խնձորի շորս կողմում փաշտի կտորտանքներ շարած, դեմ ենք արել

Ղրի հոսանքին ու չերբ նա անիվի նման դարձել է, ուրախութունից քրքջացել ենք: Հետո «վարդավառ» ենք խաղացել, իրար թրջել, ցեխոտել ու չերբ ատեն ենք դարձել, մեր մայրերն ապտակներով են հատուցել մեր «քաջագործութունները»

Դեռ մանկութունից ել չես շատ ելի սիրում խաղալ Մանուշի, մեր հարևանի շեկ մազերով աչք աղջկա հետ: Մենք համարչա հասակակիցներ ելինք: Յեվ միլենույն ժամանակ՝ լավ հարևաններ: Մայրս միշտ ազատ ժամանակները նրա մոր մոտն եր անցկացնում, իսկ մեր հայրերը՝ հի՛ն ընկերներ ելին:

Յես վոչ միացն սիրում ելի Մանուշի հետ խաղալ, ալև ուզում ելի միշտ նրա մոտ լինել:

Հետագայում ալ ցանկութունն ավելի դարգացավ: Դեռ տասնևչորս տարիսնոր եր լրացել, բայց չերբ տեսնում ելի նրան, մի տեսակ հուզվում ելի, սիրտս արագ-արագ խփել եր սկսում: Յեվ մի որ ել, ձեզանից ինչ թագցնեմ, չերբ նստած միասին դաս ելինք պատրաստում, հուզմունքս գնալով աստկացավ, սիրտս ավելի արագ թափով խփել սկսեց ու չգիտեմ ինչպես պատահեց, վոր չես փաթաթվեցի նրա վզովը: Վսնց կարմրեց: Յերևի չես ել շատ կարմրեցի, վորովհետև կզացի, թե ինչպես չերեսներս ու ականջ-

ներիս բլթակներն ուղղակի վառվում ելին: Պարզն
ասած, փոքր ժամանակ անց, չես զգացի, վոր
ուղղակի մի տեսակ, այսպես ասած... սիրահար-
ված ելի Մանուշի վրա:

II

Իմ հայրը բանվոր եր: Քսան տարի չեր՝ ինչ
չերկաթե հետ ընկերութիւնն եր անում: Ինքն ել
չերկաթե դեմք ուներ, ուժեղ, վճռական:

Մանուշի հայրը նույնպես բանվոր եր: Նրանք
չերկուսով հենց նույն գործարանումն ել աշխա-
տում ելին:

Յերբ հայրս առաջին անգամ ինձ գործարան
տարավ, չես զարմացա, մի քիչ ել վախեցա ճիշտն
ասած: Հսկայական մեքենաները մոնչալով դառ-
նում ելին: Ասես վռագում ելին, ուզում ելին
փախչել:

Հայրս բանում եր մի մեծ մեքենայի վրա:
Այն ժպտուն դեմքը, այն պայծառ դեմքը, վորով
նա հանդիպում եր ինձ, չերբ տուն եր դառնում,
խոժոռվել եր: Յերկաթի սառնութիւնն կար դեմ-
քին: Պատկառելի չեր:

*
* *

Յերեկոները նա հաճախ ուշ եր տուն գա-
լիս: Յեվ միշտ զբաղված եր: Մանավանդ վեր-

Ղին տարին: Գլուխը հակած մի բավական հասարակ վրա՝ կարդում եր: Գիրքն ուսերեն եր: Բան չէի հասկանում: Նրա սկզբում մի միրուքավոր ու չերկար մագերով մարդու նկար եր տպված: Հայրս խորասուզված այդ հասարակ գրքում, կարդում եր մինչև ուշ գիշեր:

Վերջին տարիները նա ինձ այնքան ել չեր փաղաքշում, նախ՝ վոր չես արդեն բավական մեծացել եի, չերկրորդ՝ վոր նա շատ եր զբաղված: Յես այդ հետազայում իմացա, իմացա նաև՝ թե սով եր այն գրքի սկզբում տպված միրուքավոր մարդը:

Մայրս միշտ կովում եր, չերբեմն լաց եր լինում նույնիսկ, թե ինչու տան վրա այլևս ուշադրութուն չի դարձնում, ու՛շ գալիս, շուտ գնում: Բայց հայրս չերկաթե սառն դեմքով, շրթթունքները սեղմած, հաղիվ լսելի ձայնով շշնջում եր— «Ամեն բան քեզ պատմել չեմ կարող: Փամանակ չունեմ»...

*
**

Այսպես, առանց վոչինչ փոխվելու, որերն անցնում եի:

Բայց արդեն ձմեռ եր: Ձյունը սավանել եր շրջապատը: Ցուրտ: Մառուց:

Ինչ անենք՝ վոր հայրս զբաղված եր: Պայ-

մանը՝ պայման եր: Ակոր դային մարդու բան
դիջի: Պրծնի:

— Զյունը թամրզեք, ձյունը:

— Թե չեք թամրզելու, փասա-փուսեքդ հը-
վաքեցեք...

Պետք եր մաքրել: Պայմանը պայման եր: Ինչ
արած, վոր հայրս ուշ եր գալիս, շուտ գնում:

Այդ բեռն ել մորս վզին ընկավ:

Յես ոգնում ելի:

Դողդողալով բարձրանում եր ու իջնում
կտուրից՝ հոգնած և ուժասպառ:

Բայց այդ եժան չնստեց մեզ:

Քրտնեց, սառեց ու հիվանդացավ:

Անկողին ընկավ:

Հայրս նորից ուշ գալիս եր, շուտ գնում:
Զբաղված եր:

Մորս խնամելու ժամանակ շուներ: Յես ելի
խնամում: Զոգնեց:

Ասես մայրս վերջնականապես խռովել եր
մեզանից: Տնքաց բավական, տանջվեց անկող-
նում, բայց չապրեց:

Գնաց...

Հորս լերկաթե դեմքն ավելի սառնացավ:
Մռայլվեց: Ատամներն իրար սեղմած, նա ասես
ինչ վոր ծանր ցավ եր զսպում: Լաց չեղավ:

Յեկան նրա բանվոր ընկերները: Դագադ
եյին բերել:

Գալիս եյին հարեան կանայք, հուսադրում,
միրգ եյին բերում ինձ: Փաղաքչում: Մանուշն
եւ եր գալիս: Նա չեւ եր համոզում իր մանկա-
կան փաղաքչանքներով:

Հայրս նորից ուշ եր գալիս և շուտ գնում:
Նոր-նոր գրքեր եր կարդում: Միկնուշն ժամա-
նակ նա կրկին սկսեց փաղաքչել ինձ: Համոզել
Հուսադրել:

— Դոչադ մնա, — ասում եր, — գոչադ:

— Դոչադ եմ, — պատասխանում եյի:

Ու զրկում, համբուրում եր ճակատս:

III

Յես հազիվ 15 տարեկան լինելի, չերբ այդ
դեպքը կատարվեց:

Վաս տարի չեր, սովի տարի: Քաղաքում
հաց չեր ճարվում: Գաղթական կանայք սպան-
դանոցից մորթվող անասունների արչունն եյին
բերում, չեփում և կերակրում իրենց ընտանիքը:
Ապրել չեր լինում: Քանի անգամ քաղցած ժո-
ղովուրդը հարձակվեց փռերի ու խանութների
վրա և ջարդեց: Նավթ չկար: Տները մութն եյին,
պատուհանները՝ կույր:

Վատ տարի չեր: Փողոցներում ամեն ուր
մարդիկ ելին սպանվում ու թալանվում:

Բայց հայրս նորից ուշ եր գալիս և շուտ
գնում: Հազար ու մի մտքեր շրջում ելին գլխումս:
Սիրտս կծկվում եր: Տանջվում ելի անկողնում:
Քունս չեր տանում, մինչև հայրս չեր գալիս:

Գալիս ու հուսադրում եր.—

— Ղոչաղ մնա:

Մի գիշեր ել փալասի մեջ փաթաթած մի
հրացան բերեց: Հետը փամփուշտներ: Հետո մի
մեծ սև հաց: Յես զարմացա: Այդքան հաց. և մի
անգամից:

Գրկեց ու փաղաքշեց ինձ.—

— Ղոչաղ մնա, զոչաղ...

— Ինչ կա՝ վոր զոչաղ չմնամ:

— Ապրես, զոչաղ մնա, ես բոլոր հացը քեզ
համար եմ բերել: Կուտես:

— Իսկ հրացանն ինչի համար ե:

— Առավոտը կուլի պիտի գնանք ինչքան
բուրժուլ ու տերտեր կա, պիտի կոտորենք. իսկ
դու զոչաղ մնա:

Բուրժուլների ու տերտերների մասին չես
արդեն գիտելի, հայրս եր պատմել, գիտելի՝ թե
ինչ պտուղ են: Շատ ուրախացա, վոր գնում
ելին նրանց կոտորելու:

— Չմտածես, միքանի որից ելի կզամ,—

շարունակեց հուսադրել, — մենակ թե՛ դոչադ մնա:
Քնեցինք:

Դեռ լուսաբացը չեղած, ճշաց մի սուր շշակ:
Հայրս վեր թռավ: Ազգանշան եր:

Յես նույնպես վեր կացա:

— Յես ել եմ գալիս: Յես կարամ բուր-
ժուկներին կոտորել:

— Ձե, դու մնա: Հետո:

Նորից խնդրեցի: Մերժեց:

Նա շտապ հագնվեց, գրկեց ինձ, համբու-
րեց. —

— Դողադ մնա, — ասաց ու գնաց:

*
* *

Շշակի ճիչից կես ժամ շանցած, քաղաքում
սկսվեց մի կատաղի հրացանաձգութուն:

Կարկուտի նման գնդակ եր տեղում:

Արագիւնների կափկափի նման գնդացիներն
եյին կըտկրտում:

Հետո թնդանոթներն սկսեցին մռնչալ:

Ու ամբողջ որն այդ կատաղությամբ կռիվը
շարունակվեց և մայրամուտից հետո քիչ խաղաղ-
վել սկսվեց:

Նորից ծանր մտատանջության մեջ ընկա. —
«ՄԼը ե հայրս», — մտածում եյի: Այդ որն ինձ ան-
չափ մենակ եյի զգում:

Արեւածագին կռիւն սկսվեց ավելի կատաղի թափով և կամաց-կամաց կարծես մոտենում եր մեր փողոցին:

Յերկրորդ որն իրիկնապահին մեր տուն չեկավ Մանուշի հայրը: Յես զարմացա, չնայած խիստ լուրջ ու մտատանջ եր չերևում, բայց նա չել հորս նման ինձ փաղաքշել սկսեց. —

— Դողաղ մնա, դոչաղ, — ասավ, հորս բառերով:

— Իսկ ձեր ե հայրիկս, — ասի չես:

— Կգա, դու մի մտածի... դու դոչաղ մնա... հեջ մի մտածի...

Վերջին նախադասությունը նա արտասանեց ավելի անկապ ու մի տեսակ չերկչոտ տոնով:

Յես մտատանջության մեջ ընկա: Հաղար ու մի հրեշավոր մտքեր նորից կյանք ստան գլխումս: — Ահա հայրս սպանված, հայրս վիրավոր, կամ կախված: Նորից մտքեր: Ծանր, անկապ:

Մանուշի հայրը նորից հուսադրեց ու գնաց:

Նույն չերկչոտ ու անկապ խոսքերով Մանուշն եր ինձ հուսադրում: Բայց չես՝ մանավանդ Մանուշի խոսքերից կռահեցի, վոր հորս մի փորձանք ե պատահել ու չեն ուզում ինձ հայտնել:



Յերկու որից կռիվը խաղաղվեց:

Բանավորները հաղթվել ելին:

Մի մասը կտտորվել եր, մի մասը՝ փախել:

Մանուշի հայրը փախել եր ու մայրն ան-

հայտացել:

Իսկ իմ հայրն ընկել եր չեկեղեցու փողոցում, ճակատից ու կրծքից գնդակված:

Ի՞նչ անելի չես: Սիրտս ճմլվում եր: Լացը խեղդվում կոկորդումս:

Մանուշը նույնպես անոգնական եր: Մենք իրար համոզում ու սիրտ ելինք տալիս, բայց ոգուտն ինչ:

Յեկան ավելի ծանր ու դառն որեր:

Հատափոր Ակոբ դալին ներս ընկավ մեր տունը: Տան «քրեհի» պատրվակի տակ՝ հավաքեց մեր ամբողջ կայքը: Ի՞նչ անելի, ձեռիս ճարչկար: Քաղցած ու անոգնական՝ կծկվեցի տան մի անկյունում:

IV

Մի որ հետո ներս ընկան չերկու փափախավոր, մաուզերներ կապած մարդիկ:

— Լակոնտ...

— Յես քու ըսենցն ու ընենցը...

— Հերդ ինչ տեղ ան...

— Սպանվել աս, — ասի լես աղիողորմ կերպով:

— Սուտ ան... Դրուստն ասա, դրուստը...
Յես քու...

Յես սարսափում ելի նրանց արնակալած աչքերից, հարբած ելին, բերաններից թունդ գինու հոտ եր բուրում:

— Յես քու ըսենցն ու ընենցը... ասա, թե չե...

— Յես քու ըսենցը...

— Սպանվել աս, — լացակամած վրա բերի լես:

Սաստիկ մերհիշոցը, անկապ խոսքերն ու գինու թունդ հոտն իրար ելին խառնվել: Յես ինքս ել ինձ հաշիվ տալ չելի կարողանում: Շըշմել ելի:

Յերկու դամշի սկսեցին դադել մեջքս և ուսագլուխներս: Ղամշիների տակ նրանք ինձ առաջ տվին ու տարան:

*
* *

Հասանք մի լերկհարկանի շենքի: Կտուրին լեռագունն դրոշակ եր քաշ արած: Ներսից հազար տեսակ ձայն ու զոռզոռոց:

Մի տեղից —

«Մեր հայրենիք, թը՛ր՛ը՛ շլառ անտեր...»

Մի ուրիշ տեղից—

«Ա՛յ, դա՛յ, դա՛յ, դա՛յ, դա-դա՛յ, դա-դա՛յ, դա-դա՛յ...»:

Մի այլ տեղից—

«Յես քեզ կասեմ Նազրիկ ջան, դու ինձ ասա Արշակ ջան...»:

Բոլոր տեղերից ել խոստ ու անկարգ ձայ-
ներ

Ներս տարան ինձ: Ուսադիրներով մի գա-
ռամած մարդու մոտ: Նրա աչքերը ջրակալած
եչին ու նայում եչին ժանգոտ ակնոցների տա-
կից: Բթի ծայրն ու այտերի կենտրոնը թունդ
կարմիր եչին: Յերևում եր, վոր արագի հետ շատ
եր ընկերութուն արել: Ժանգոտ ակնոցների տա-
կից չռած աչքերով ու խոստ կակազ ձայնով
ինձ դիմեց.—

— Է՛, ը՛, ը՛, ի՞նչ կայսեմ, ը՛, ը՛, դրույսան
այսա...

— Թե չե՛,—վրա տվին փափախավորները,
դամշինները շարժելով:

— Է՛, ը՛, ը՛, ը՛ Ստյոպան քու հերն սո:

— Այո՛:

— Է՛, նա սուր ա հմի, ը՛, ը՛, ը՛, դրույսան
այսա: Է՛, ը՛, թե չե հիշուն ճիպոտ կույտես...

— Նա սպանվել է:

— Ը՛, սչուտ ես այսուսմ... Ը՛, Ը՛ սչատանի
ճուտ... Ը՛, Ը՛, Ը՛... Յես քու ըսենցը...

— Դրուտ եմ ասուսմ, դրուտա:

— Ը՛, Ը՛, Ը՛, հինիգ ճիպոտ եդ լակոտին. Ը՛...
Անխղճորեն դադեցին փափուկ տեղերս:

*
*
*

Նույն ըսակելին ներս բերին Մանուշին,
գզգզված ու պատառոտված շորերով: Յես սար-
սուացի:

— Ը՛, Ը՛, Ը՛, ուր ա հերըդ, Ը՛, Ը՛, դրուչստն
այսա, քան,—նրան դիմեց կարմրաքիթ մարդը:

— Չգիտեմ:

— Ը՛, վոնչ չգիտես, Ը՛, Ը՛, Ը՛... Այսա, Ը՛, Ը՛,
թե չե քոթակ կուտեցս, Ը՛, Ը՛, Ը՛...

— Համա լավ ապրանք ա, հա՛,—ասավ ինձ
բերող փափախավորն իր ընկերոջը, աչքով անե-
լով դեպի Մանուշը:

— Շատ ա մատղաշ.

— Լավն ել եդ ա: Քաշ տանք:

— Քա՛շ տանք...

Սակարկեցին:

Յես նորից սարսուացի, մարմինս փշաքաղ-
վեց:

Նրանք իրար չերեսի ժպտացին, ապա դի-
մեցին կարմրաքիթ աստիճանավորին:

— Պարոն զնգապետ, տվեք, մենք դրան կխոստովանեցնենք:

Աչքով արին:

— Ը՛, ը՛, ը՛, տարեք: Բայ՛չ լավիկն ա...
ը՛, ը՛, ը՛...

Քաշեցին Մանուշի թևից ու դուրս տարան:

Սարսուռը կատաղության փոխվեց: Յես շղածգվեցի, ինքս ինձ ուտում ելի: Ճար չկար:

— Ը՛, ը՛, ը՛, այսա, լակոտ, ը՛, ը՛, թե չե, քոթակով քեժ ըսշպանել կտամ, ը՛, ը՛, ը՛, հերդ վճրտեղ ա. — նորից ինձ դիմեց կարմրաքիթ աստիճանավորը:

— Ասում եմ, վոր սպանվել ե, ել ինչ՞ու չեք հավատում, — տաքացած վրա բերի:

— Ը՛, ը՛, ը՛, ... ձենըդ կտրի, լակոտ... Յես քու ըսենցը... Հիթշսուն քոթակ սյրան...

Ինձ դուրս տարան չերկու ձեռներիցս բռնած: Կապեցին ձեռներս ու վոտներս, հանեցին շալվարս ու հարվածներն սկսեցին տեղալ իրար յետևից: Ցափս սպանիչ եր: Գալարվում ելի ճիպոտների տակ: Ինձ կորցրի: Մեկ ել ուշքի չեկա մյուս որը, մի նեղ ու խոնավ նկուղում: Մարմինս փետացել եր, ցավից շարժվել չելի կարողանում:

Նորից հարցաքննության տարան: «Ը՛, ը՛, ը՛» զնգապետը նորից սպառնաց: Նորից ճիպոտեցին:

Մի շաբաթ հետո, չերբ փաստերով համոզ-
վեցին հորս սպանութեան մասին, ինձ արձակե-
ցին: Ազատվեցի արյուևոտ մագիլներէց:

Իսկ Մանուշին դեռ տանջում ելին անպատ-
մելի տանջանքներով:

V

Մեռած բան ե: Ակոր դալին ել ինձ ներս
թողնի: Գուռը պինդ փակեց:

— Կորի, — ասավ, — ազգի դավաճանի լակո-
տին չես տեղ չունեմ: Ռնդ իլ, թե չե կտամ
անդ ու մանգղ կղզեմ:

Բարեկամ չունեցինք: Մանուշենց տանն ել
մարդ չկար: Փակ եր:


Սոված ու մերկ թափառում ելի փողոցները:
Հաց ելի մուրում: Գիշերում ելի քաղաքալին
այդում:

Սովածների ու անթեկանների թիվը շատ:
Ինչքան ասես ընկեր ունեցի:

*
**

Ամիս ու կես շանցած՝ նորից սկսվեց կա-
տաղի կռիվը:

Նորից գնդացիները կափկափեցին: Գնդակ-
ները տեղացին: Թնդանոթ: Մուգիկա: Ուռուս:



կրկին կատաղի կռիվ: Գնդակ ու գնդացիք: Հար-
ձակում: Ուռում: Ապա խուճապ:

Վոնց ելին փախչում: Փափախ և ուսաղիք
իրար ելին խառնվել: Վորը փախավ, վորը կո-
տորվեց:

«Ը՛, ը՛, ը՛» գնդապետը մինչև փողոց հազիվ
եր փախել ու աչնտեղ ել կռնակի վրա գետին
եյին փռել:

Վոնց ուրախացան...

Քաղաք մտան: Ամբողջ կոկորդով ուռան
եյի կանչում: Չաչնս կտրվեց, բայց խուպուտ կո-
կորդով ելի բղավում եյի:

Յեռագունն դրոշք պատուվեց: Տեղը կարմիր
բարձրացավ:

Մերոնք չեկան:

Մանուշի հայրն ել չեկավ:

Հետո բանտից բերին Մանուշին: Նիհարած
ու հյուժված: Աչքերը փոսն եյին ընկել: Ճանա-
չել չեր լինում: Յես շատ ելի մտածում նրա
մասին: Ուղղակի խղճում ելի նրան:

Մաուզերիստոների կեղտը մաքրվեց:

Որերն անցան:

Մանուշի հայրն ընտրվեց հեղափոխական
կոմիտեյի նախագահ:

Իսկ իմ հայրն անդարձ կորել եր:

ե՛, տարիներ են անցել այս պատմութիւնից, բայց չես ամեն ինչ հիշում եմ մանրամասնորեն:

Յես հիմա կոմյերիտական եմ: Արդեն հինգ տարվա ստաժ ունեմ: Վոչ միայն գիտեմ, թե ո՞վ ե ան միրուքավոր մարդը, վոր տպված եր հորս գրքում, այլև նրա մի շարք գրվածքների բովանդակութիւնը գիտեմ: Մանուշն ել կոմյերիտական ե: Մենք միասին մտանք կոմյերիտութիւն մեջ: Մանուշի հայրը չերաշխավորեց:

Այժմ ել չես շտիպանց սիրում եմ Մանուշին: Չնայած վոր նա մեր քաղաքում չե, բայց միշտ ինձ նամակներ ե գրում: Յես ել նրան եմ գրում: Հետո, ձեզանից ինչ թագցնեմ, չես ուզում եմ նրա հետ... այսպես ասած... ամուսնանալ:

Յես հիմա լուրջ կերպով զբաղված եմ ռազմական գիտելիքներով: Լավ կերպով գիտեմ զընդացիրի բոլոր մասերը: Հրացանով ել լավ կրակում եմ: Այս տարի չերեք անգամ նշան եմ բռնել Չեմբերլենի մոնոկլին և տարել մրցանակ: Մի անգամ ել Մանուշն ե խփել Չեմբերլենի մոնոկլին, նրա նկարը «Ավանգարդ»-ում ել հենց տպվեց: Տեսած կլինեք:

Զմուռանամ տակ, վոր ալս աշնանը չես բա-
նակ եմ գնալու, չերկու ամիս ե մնացել: Ն'լ ա-
վելի պիտի կատարելագործեմ ռազմական պատ-
րաստությունս, ել ավելի պիտի սովորեմ, վոր
չեթե մեկ ել աստիճանավորներն ու փափախա-
վորները վորձեն խանգարել մեր հանգիստը, ձեզ
հետ միասին, արժանի պատասխանը տանք նրանց:

1927 թ., սեպտեմբեր.

ԻՍԱԿ ԻՎԱՆԻԶԸ ՓԱՅՏ ԶԱՐԴԻ

I

— Հեյ գիդի Իսակ Իվանիչ, ի՞նչ որերի հասար...

II

Իսակ Իվանիչը:—

Ո՞վ չեր ճանաչում նրան: Համբավը քաղաքից-քաղաք եր տարածվել: Հարստութեան մասին ամենքն ելին խոսում: Վաճառականների շրջանում պատկառանքի առարկա: Ամենքին խրատող, սովորեցնող:—

— Աղբի վրին շաքար կածեն, — անձրե՛վ կգա, ձյո՛ւն կգա, շաքարը կեթա, աղբը կմնա: Մարդիս լավությունն ա մնալու և մեկ ել՝ անունը, քանի կարաք՝ լավություն արեք, — ասում եր նա իրեն չենթակա մանր վաճառականներին ու գյուղացիներին ամեն անգամ:

Ասեո առաքինութեան ու բարութեան աղբյուրն եր կարկաչում նրա բերանով: Մեղմ: Վճի՛տ:

Յե՛վ առաքինութեան ու բարութեան վարագույրի տակ Իսակ Իվանիչն իրենը գիտեր:

— Իսակ Իվանիչ...

— Իրեք անգամ թե ասիր Իսակ Իվանիչ՝
քար կդառնաս, — այդպես եր խոսում հնադար-
յան այդ քաղաքը մեծ վաճառականի մասին:

*
* *

Յեվ հիմա՝ Իսակ Իվանիչն այս որո՞ւմ:

Իսակ Իվանիչը ձյ՞ռն մաքրի:

Իսակ Իվանիչն ի՛ր սեփական փոփոխը Չար-
դի, վոր ուրիշները վառե՞ն:

Իսակ Իվանիչն ի՛ր սեփական մեջքով ի՛ր
սեփական գեանախնձորը կրի, վոր ուրիշներն
ուռե՞ն:

— Հեյ գիդի Իսակ Իվանիչ, ես եր քո վերջը:

Ու հիմա, ինչ վոր գլխոտ, պատասուտված
մարդիկ, «Քրիստոսին չարչարողների պոպոզնե-
րով», հայ և ուս, վորոնց ինքն ըսկի նոքար էլ
չեր վարձի, հիմա եդ գլխոտներն առաջ տան
Իսակ Իվանիչին, հրացանի դոնդաղներով, թե—

— Կրի, չես քո ըսենցը...

— Մաքրի, թեդ արա...

— Չարդի, թե չե...

— Յես քո ըսենցը...

*
* *

— Հեյ գիդի Իսակ Իվանիչ, ես եր, հալ-
բաթ, պահած քեդ համար:

Հիմա, չերբ Ի՛ր սեփական գետնախնձորի բեռի տակ, գնում ե ուրիշներին կերակրելու, խորը, խորը միտք ե անում Իսակ Իվանիչը: Յե՛վ ամբողջ անցածը չերազ ե թվում:

Հիշում ե պատանեկության որերը: «Լիսահոգի, իսկական հայ քրիստոնյա» հորը, վորի շնորհիվ ինքը մեծ վաճառական դարձավ. «Իմ փեշակը պտի սվորես, իմ հացը պտի ուտես» — ասում եր հայրը և պատանեկական որերից նրան կապել եր վաճառատան հետ:

Ու սկսեց նա հոր հետ վաճառականական գործերով չերբեմն շրջել քաղաքից-քաղաք — Բագու, Հաշտարխան, Թեմիր-Սան-Շուրա, Մոսկով ու մինչև Պետերբուրգ: Հաճելի ճանապարհորդություն:

Յե՛վ չերբ քիչ տարիքն առավ, հոր հանձնարարությամբ՝ չերբեմն ել մենակ եր ճանապարհորդում: Հե՛յ գիդի, ի՛նչ քեֆեր ասես չարեց են անիծած ոսի աղջկերանց հետ: Ի՛նչ գիշերներ ասես չլուսացրեց:

Քանզցր, անդարձ որեր...

Ու հիմա Իսակ Իվանիչը փայտ ջարդի: Են ել ուրիշների համար: Ի՛ր սեփական փայտը:

IV

Յերբ հայրը մեռավ, ինքը քսանիննը տարեկան եր:

Թե տխրեց, թե ուրախացավ:

Տխրեց, վորովհետև հայրը մեռավ:

Ուրախացավ, վորովհետև հայրը մեռավ:

Մեռելաճաշ տվեց: Պատարագ անել տվեց, ու չերբ կրկին լուսացավ, մեծ չեռանդով և վողևորությամբ անցավ վաճառականական գործերին:

Հորը հետադիմական եր համարում: Դեռ վաղուց եր, ինչ համոզում եր, վոր հետևեն մեծ վաճառականների որինակին, ցուցանակ գրել տան վաճառատան համար: Հայրը դեմ եր.— «Առանց գրի չել լավ ա» — ասում եր — «Ինչ ես ուրիշների աչքը մեծացնում մեր վրին»:

Ու հոր մահից հետո Իսակ Իվանիչն սկսեց իր առաջադիմական գործունեությունը: Գրել տվեց ու վաճառատան ճակատից կաջրեց—

МАГАЗИНЪ
И. И. АНТОЛОСЯНЪ
фирма сущ. съ 1860 г.

Այդ որվանից սկսեց Իսակ Իվանիչի անունը գրնգալ վողջ քաղաքում:

Այդ որվանից Իսակ Իվանիչն ընթացիկ մարդ դարձավ:

— Աղբի վրին շաքար կածեն— անձրե՛վ կգա, ձյուն կգա, շաքարը կեթա, աղբը կմնա: Վատությունը, հարամությունը չի ծածկվում, քանի կարաք՝ լավություն արեք, — ստում եր նա իր հաճախորդ գյուղացիներին. և չերբ նրանք, հմայված Իվանիչի քաղցր խոսքերից, նրա դեմքն եչին դիտում ու լսում ազահորեն, — նա, չիթը չափելիս, արշինը վարպետորեն խաղացնում եր ձեռների մեջ, կրճատում չթի քանակը:

*
* *

Վաճառականական գործերով ելի ճամբորդեց Իսակ Իվանիչը:

Ելի գնաց Մոսկով, Պետերբուրգ, Վարշավա, Ռիգա: Ելի քեֆեր արեց ուսի աղջկերանց հետ: Հեյ գիդի որեր: Անդանձ որեր...

Ու հիմա՝ Իսակ Իվանիչը ձյուն մաքրի:

V

Ելի առաջագիմական քալեր արեց Իսակ Իվանիչը:

Հատուկ ճարտարապետներ կանչեց և հնադարյան այդ քաղաքում կառուցել տվեց չեվրոպական վոճի իր սեփական տունը:

Դեպի Մասիսը նայող մի պատշգամբ շինել
տվեց, վոր առավոտ, իրիկունն նայի «հայոց սա-
րին» ու հիանա: Հոգին փառավորվի:

Յերբ տունն ավարտվեց, նա իր սենյակում,
վորպես գլխավոր գարդեր, կախ տվեց —

Կայսրի,
Կայսրուհու,
Խրիմյան Հայրիկի,
Քաջ Վարդանի

Յեվ Անի քաղաքի վոսկեզոծ շրջանակներով
մեծագիր նկարները:

— Իսկական հայերը սրանք են չեղել, լիս
պառնա սրանց հոգին. — ասում էր նա ամեն ան-
գամ՝ մատնացուլց անելով դեպի Խրիմյանն ու
Քաջ Վարդանը:

Ու հիմա՝ իր սեփական տանն ուրիշներն
են նստած, գլխոտ, վոջլոտները, չերեկվա գլա-
դեք — հայ և ռուս խառը:

Ու հիմա՝ Քրիստոսին չարչարողների պո-
պոզներով աջն անորեհնները պատառոտել են իր
սրբազան նկարները և շաղ տվել վողջ բակովը
մեկ...

— Հեյ գիդի Իսակ Իվանիչ, ես եր պահած
քեզ համար:

VI

Ոլիան ել, Սոնիան ել, գնալով, բոյ ելին քա-
շում, մեծանում:

Յեզ Իսակ Իվանիչն ի՞նչ հուշսեր եր կապել
նրանց հետ:

Իբ ձեռքի մեջ կառներ քաղաքի լերկու մեծ
և իրա հետ մրցող վաճառականներին՝ Անդրեյ
Արտեմիչին և Մակար Բարսեղիչին:

Ոլիաչին կտար Անդրեյ Արտեմիչին:

Սոնիաչին՝ Մակար Բարսեղիչին:

Յերեք խոշոր կապիտալները կմիացնելին:
Բազմում նավթահորեր կգնեցին: Վոսկին ջրի
պես կհոսեր: Վոսկու պես կզրնգար Իսակ Իվա-
նիչի անունը սաղ աշխարհում:

Յերգվել եր՝ այդ բոլորը հաջողությամբ կա-
տարելուց հետո՝ մի չեկեղեցի շինել տալ՝ իբ
հիշատակը հավերժացնելու համար:

Բայց «անորեն պոպոզները» վողջը խորա-
կեցին: Ամբողջ ծրագիրը շուրը նետեցին:

— Անիծվեն դրանք:

Սոնիաչին քիչ սխմրտեցին, Ոլիաչին նկուղ
քշեցին՝ ու նրա հայելազարդ սենյակումն են
«անորեն պոպոզների» մեծավորն ե նստում հիմա:

Իսկ Իսակ Իվանիչը թող փայտ ջարդի:

— Հե՛յ գիդի Իսակ Իվանիչ, հալբաթ ճա-
կատիդ են եր գրած:

VII

Յերբ Ռուսաստանում հեղափոխությունն

սկսվեց ու ցարին գցեցին, Իսակ Իվանիչի սիրան
աշնանային տերևի նման դողալ սկսեց:

Ամեն ոք յրագրին փող եր տալիս, ազահու-
թլամբ կարգում. —

— «Բուրժուշներին կոտորում են: Թալա-
նում: Շան նման բանեցնում»:

Ինչ չերազներ ասես շտեպով: Մանր: Դանոն:
Մաշոդ:

— Դիփ եզ ստուգենաներն են մեղավոր:
Ում գլխին ստուգենաթի շլշապա չա ծածկած, վիզը
պիտի կտրել: Առաջին հետ հեղափոխութլունը
զբանցից ընկավ: Իրանք՝ մոզա գցեցին, — ասում
եր նա իր ծանոթների ու բարեկամների շրջանում:

Նորից անքուն գիշերներ եր անցկացնում:
Նորից ծանր ու մղձավանջային չերազներ:

Ու ամեն ինչ խորտակվեց:

Բոլոր ծրագրները շուրն ընկան: Բոլոր հուշ-
սերը հալվեցին:

Ու հիմա այդ ծանր, մղձավանջային չերազ-
ներն են՝ ասես թե՛ կյանք դարձել:

1927 թ.

ՅԵՐԿՈՒ ԶՈՒՅԳ ՇՐԹՈՒՆՔՆԵՐ

Յերբ վերջին զանգը վոմանց խուճապի մատնելով ու գլխակուրույս, վոմանց հանդարտաքայլ ներս լցրեց վագոնները, վերջնականապես պարզվեց, վոր այդ կուպեյի ներքին «հարկում» իրար հարևանությամբ պիտի ճանապարհորդելին հետաքրքիր չորսը:

Նրանցից մեկը շունն է, վորին այդպես ել կկոչենք, չերկրորդը, վոր ներկա պատմվածքի «գլխավոր հերոսն» է, կասենք պարզապես տիկին Շոկոլադ, իսկ չերկու մնացածները թուրք գյուղացիներ էլին. վերջիններիս առանձին անուններով հանդես չգալն ել վոչնչով չի նվազեցնում «ռոման»-ի արժեքը:

Տիկին Շոկոլադը չերիտասարդ եր ու թարմ: Հագնված եր փարիզյան վերջին նորձևությամբ. ծոճրակի մոտ լավ հարգարված ու կտրված և ականջների կողմից չերկու խոշոր փակադժեր կազմած մազերով: Այդ չերկու փակադժերի տարածության մեջ չերկու ուրիշ բարակ փակադժեր, կորացած հորիզոնական դիրքով, աչքերից վերև, աչքան բարակ էլին նրանք, վոր ասես և կա-

լին և չկային: Նրանք հովանավորում ելին փայ-
լող կապտավուն աչքերը: Շրթերի խտացած
կարմիրը՝ ավելի քան ճշում եր իր արհեստակա-
նության մասին: Յերեսը ճերմակ, ճերմակ:

Վողջագուրանքն սկսեց, չերբ գնացքը
ընթացք առավ:

Տիկին Շոկոլադն սկսեց «սրտային գեղում-
ները»: Գրկեց իր բավական խոշոր շանը, դրեց
ծնկներին:

Այդ գործողության ժամանակ նրա նռանց
այն ել կարճ շրջագրեստի փեշը ծնկից վեր բարձ-
րացավ: Թուրք գլուղացիները ծանր հոգոց հա-
նեցին ու թքոտեցին շրթունքները:

Տիկին Շոկոլադն սկսեց շուել, փաղաքշել
իր շանը, ապա գրկեց: Շունը նույնպես ակտի-
վություն ցույց տվեց, առջևի չերկու թաթերով
ողակեց տիկնոջ սպիտակ պարանոցը: Թուրք
գլուղացիները դարձյալ ծանր հոգոց քաշեցին ու
փսփսացին կամացուկ:

Տիկին Շոկոլադն սկսեց համբուրել իր խո-
շոր շան կարմիր գունչը, իսկ շունը՝ լիզել նրա
շրթունքները:

Թուրք գլուղացիները հուզված շարժումներ
ելին անում, կոտրատվում, հոգոց հանում, թքո-
տում շրթունքները, ջղախուլությամբ շփում ու

վոլորում բեխերը և գլուխն ափսոսանքի դանդաղ
թափով տարուբերում:

Յերբ չերկու գուլգ շրթունքները հագեցան
իրարից, տիկին Շոկոլադը կարգի բերեց իր շո-
րերը, ուղղեց ծնկից վերև բարձրացած փեշը և
արագությամբ բացեց «ռեդիկուլն» ու նրա կա-
փարիչի հայելին բռնեց դեմը, մյուս ձեռքով
կարմրով ու սպիտակով սկսեց սրբազրել և վե-
րականգնել շան համբույրի հետքերը:

Հետո կերավ շոկոլադ: Նույնը հրամցրեց
շանը:

Թուրք գյուղացիները խոսում ելին փսփսու-
կով, կտորատվում ելին, հորանջում: Սրում ու
վոլորում ելին բեխերը և շեշտակի նայում շոկո-
լագային տիկնոջ չերեսին:

Նա անտարբեր այդ հայացքներին, նորից
սկսեց զբաղվել իր շնով: Նորից գրկախառնում,
նորից վողջագուրանք: Յերկու գուլգ շրթունք-
ները նորից լիզում ելին իրար:

Դարձյալ ներկերը բուժեցին սպինները և
դարձյալ կերան շոկոլադ:

Որը սահում եր

Յերբ գիշերն արդեն անցել եր միջանի ժա-
մով, տիկին Շոկոլադը պատրաստեց փափուկ
սպիտակ անկողինը: Հանեց իր կիսակոշիկները,
թաց շորով սրբեց շան թաթերը և նրանք պառ-

կեցին քնելու: Նա, այդ շոկոլադային կինը, և
այն խոշոր շունը գրկեցին իրար ու պառկեցին:

Այստեղ ավելի չբրիտասարդ թուրք գյու-
ղացին արդեն պահել չկարողացավ իրեն և մայ-
րենի լեզվով թունդ հացհոչեց:

Գիշերն անցնում էր, գնացքը մոտենում
էր Բագվին:

Բագվում թուրք գյուղացիներն իջնելու ելին:

Զույգը հանդիստ նիրհում էր:

Հեռվում Բագուն է փռվել լուսածափալ ու
փայլվիտդ: Հուլսերի հեղեղ: Ավելի պայծառ չեր-
կինք—անհամար աստղերով:

Ելեկարոլույսի ֆոնի վրա բարձրացող վիշ-
կաներ, բսրձր, վիթխարի և անտուիկ:

1928 թ.

ԱԵՐ ՄԻԿԻՉ ՆԻԿԻՏԻՉԸ

- Ա՛խ մեր Միկիչ Նիկիտիչը:

Ի՞նչ ճանաչում ես նրան, իսկական, իսկական հոգի չե՞ մեր Միկիչ Նիկիտիչը:

Հագնվում ե՞ ճաշակով, մաքուր, խնամքով: Սափրվում շաբաթը չերեք անգամ... անխ... Զենտլմեն, քաղաքավարի: Քաղցր խոսքի աղբյուր, սիրալիր ժպտը չերեսիցն անպակաս: «Իսկա՛ն, — ասում ե, — Լենոչկա, սիրտդ պաշտառ պահի, քանի չես ես հիմնարկի գլխին եմ, քո քեֆին կաշոդ չի լինի: Պաշտառ մնա, — ասում ե. — քո պաշտառութունն ինձ շատ ե՛ դուր գալիս...»:

Ա՛խ Վերոչկա, դու չես ճանաչում մեր Միկիչ Նիկիտիչին: Յերբ իր հողվածներն ե՛ թելադրում, ենքան քաղցր, ենքան քաղցր են հնչում խոսքերը, ենքան սիրալիր, ասես իր սիրտն ե՛ հետը թելադրում: Ա՛խ...

Հա՛, մեկ ել են, վոր այնպիսի խիստ հողվածներ ե՛ գրում, վն՛ւ՛ւ՛... Այնպիսի ուժեղ բաներ ե՛ գործ ածում, վոր կարդաս՝ կզարմանաս. մարդ ապշում ե, վորտեղից ել գտնում ե՛ այդ խոսքերը: Անցյալ որը թերթում մի փոքրիկ հող-

ված ելին տպել, թե՛ Միկիչ Նիկիտիչն աշխատանքից հաճախ բացակայում ե: Վերոչկան, մի պատասխան գրեց, մի պատասխան, վնւյ, վնւյ, վնւյ, սաղ-սաղ խորովել եր եդ հողված տվողին: Հողվածի վերնագիրն ել... սպասիր, սպասիր հիշեմ, հան, վերնագիրն այսպես եր. «Պետք ե մաքրել մեր հիմնարկները բոլոր տեսակի թափթփուկներից և սնակալեզ խրտվիլակներից»:

— Վնւյ, վնւյ, վնւյ...

— Իսկ հողվածի մեջն ել, վնւյ, վնւյ, վնւյ, տաս փթանոց խոսքեր: Ափսոս, դեռ չի տպվել, վոր կարդաս: Մեր Միկիչ Նիկիտիչն ել սաստիկ ջղախնացել ե, վոր հողվածի տպագրումն ուշացնում են: Ասում ե— Լենոչկան, մի թող համարձակվեն չտպել հողվածս, խմբագրի գործը Յեկային ու Կանտորինի Կամիսիային կտամ:— Յեվ կանի, գիտե՞ս, Վերոչկան, մեր Միկիչ Նիկիտիչը շատ խիստ մարդ ե:

*
*
*

Ախ, մեր Միկիչ Նիկիտիչը:

Ես մեր Միկիչ Նիկիտիչի վրա չա պատմում: Վառեց, վառեց: Ես պատմողն ել մեր մաշինիստիկեն, ա: Յես էլ, դաթի, մեր սև աշխատողն եմ: Կազեթում գրած նուլթն ել, վոր պատմում ա, չես եմ տվել: Թարս ու շիտակ մի կերպ գրեցի,

կազեթումն ել դուս բերին: Համա վոնց եր կա-
տաղել մեր Միկիչ Նիկիտիչը, վան, վան, վան,
չաման: Մֆաթը կարմրել, ասես բաղնիքումը
տասը վեդրո չեման շուր ին ածել գլխին ու
բաց թողել, քրտինքն ել չռում եր երեսիցը: Կան-
ցիլարը մտավ թե չե, մի բաշ վրա տվեց.—

— Ես ինչ լուփեր են ընկել մեր հիմնարկը:
Ո՞վ ա համարձակվել: Յես դրանց շանց կտամ...

Ըսենց ու ընենց, ըսենց ու ընենց ասաց ու
ասաց, դուս տվեց, պլիմտորի դալդի շարեց ու
քրտինք կոխած վեր ընկավ իրա կարինետը:

Վեր ընկավ իրա կարինետը ու ինձ կանչեց:

Ասավ—Ստեփան:

Ասի— Համմե:

Ասավ— Ինչ վոր կասեմ՝ դրուստը պատաս-
խան տուր:

Ասի— Շատ լավ, հընկեր Միկիչ Նիկիտիչ:

Ասավ— Թե չե:

Ասի— Իմանում եմ:

Ասավ— Դու իմանում ես, ով ա տվել ես
հողվածը:

Ասի— Խաբար չեմ, հընկեր Միկիչ Նիկիտիչ:

Ասավ— Սուտ չասես, հա՛...

Ասի— Ձե, հընկեր Միկիչ Նիկիտիչ:

Ասավ— Լավ, խաբար չես՝ խաբար չես, հմի
դե գնա իմացի: Ծառայողների հետ խոսք բաց

արա, իմացի: Քեզ կասեն, թե ո՞վ ա դրել, համ
եւ ընենց արա, վոր չիմանան, թե չես եմ քեզ
դարկել: Ընենց շանց տուր, վոր եդ հողվածը
շատ ա քո դուրն եկել, ասա լալ ին դրել, համա
գրողն ո՞վ եր»: Հենց վոր կիմանաս, կգաս ինձ
կասես:

Ասի — Շատ լալ, հընկեր Միկիչ Նիկիտիչ —
ու դուս եկա:

— Փո՛ւհ-հ... Վո՞նց եմ ծիծաղում, վո՞նց
եմ ծիծաղում: Փորս բռնեց: Ինձ ասում ա, վոր
գնամ, ման գամ գտնեմ, թե իմ գրած նութն ո՞վ
ա գրել: Ասենք մեր Միկիչ Նիկիտիչը վոնց ֆահմի,
վոր չես եւ կարամ կաղեթում նութ տալ. նա
գիգա՝ թե եդ հունարը մենակ ինքն ունի: Լալ,
հընկեր Միկիչ Նիկիտիչ, եթամ իմանամ...

*
* *

Եքսի առավոտը Միկիչ Նիկիտիչի փուքը մե
քիչ եջել եր:

Համա են եւ ասեմ, վոր իմ աված նութը,
վոնց վոր երևում ա, գրան մի քիչ խելքի չա
բերել, փափկել ա; համ եւ ես երկորը գրուստ
ժամանակին ա գործի գալիս:

Եկավ Միկիչ Նիկիտիչը ու թագադան ինձ
կանչեց կարինետը:

Ասավ - Բարի լուս, Ստեփան: (Ձարմացա):

Ասի—Հագար բարով, հընկեր Միկիչ Նիկի-
տիչ:

Ասավ—Իմացոր:

Ասի—Չե:

Ասավ—Ընչի՞ բա:

Ասի—Չեն ասում:

Ասավ Չե՞ն ասում, թե՞ չես հարցրել:

Ասի—Հարցրել եմ, չեն ասում:

Ասավ Լավ, դե գնա, աշխատի եսոր իմա-
նալ:

Ասի—Լավ, հընկեր Միկիչ Նիկիտիչ:

Ասավ—Լենային ասա շտապ գործ կա, թող
ըստեղ գա:

Ասի—Լավ:

Լենային ասի, գնաց: Գնաց ու Միկիչ Նի-
կիտիչը զվանոկը տվեց: Ներս գնացի:

Ասավ—Գնա մաշինի ստոլն ու մաշինեն ըս-
տեղ բեր:

Գնացի բերի:

Բերի մաշինեն, գրստեցի իրա ստոլի կշտին,
Լենան ել նստեց իրա կշտին:

Յես գուս եկա:

— Դըռռռ...—ելի զվանոկը տվեց:

Ներս գնացի:

Ասավ—Ստեփան, գնա, ով կգա կուշտս,
ներս չթողաս, ասա զանիտ ա: Հասկացոր:

Ասի—Շատ լավ, հասկացա, — ու դուս եկա,
քաշի տաբրետոկես կարբինետի դռան ու նստեցի:

Ով եկավ՝ ներս չթողի: Ասին՝ վռագ գործով
ա: Ասի՝ չի կարելի, հրամայված ա: Խնդիրք ա-
րին, աղաչեցին, լսողն ով: Բարկացան, մտիկ
տվողն ով, ասի՝ հրամայված ա: Մի քանիսը գնա-
ցին. մի քանիսն ել սպասում են վոր սպասում...

Անցավ մի սահաթ, երկու սահաթ, իրեք
սահաթ, դուռը բացելու ճար չկա: Մաշինեն մին
չխչխկում ա, մին կաղնում: Են մարդիկն ել սպա-
սելուց մեռան:

Յն... Յես ել զարմացա, ասի ես ինչ ելավ
սրանց հետ, ասի ու կլլուչի ծակիցը ներս մտիկ
տվի... Մտիկ տվի... Համա ինչ տենամ, վոր լավ
ըլի... Վնյ, վնյ, վնյ... Պռոշտու տունը շեն
մնա... Համա չե, չե ես մեկը չեմ ասի, չե...
Ասի, այ հողված տալու նսլսլսլթ...

*
*

Մհաթի մեկի մոտ եր, վոր կարբինետի դռ-
ները բացվեցին: Բացվեցին ու Միկիչ Նիկիտիչը
զվանոկը տվեց:

Ներս գնացի:

Ասավ— Ես ստու-մստուրը դուս տար, մեկ
ել թե ինձ սպասողներ կան, ասա թող գնան,
ասա եսոր պրյոմ չկա: Հասկացար:

Ասի—Շատ լավ, հասկացա,— ու դուս եկա:
Մտածեցի, այ հողված տալու նսնսլթ...

*
* *

Իրիկունը ջալդ արի, շարշարվեցի, ես սաղ
նութերը գրեցի: Գրեցի ու ինքս ինձ կարդացի:
Քեֆս եկավ, լավ ի դադել Դրուստ ա, տասը
փթանոց խոսկերք չի գրել, համա ելի լավ ի
գրել: Յես ել իմու գչորա:

— Եքսի որը նութս տարա խմբագրատուն: Տվի
ու դուս եկա: Անցավ մի որ, երկու որ, վրա
յերրորդ որը նութս դուս եկավ: Համա ինչ դուս
գալ, դու տենան: Միջին երկու լել նկար. մեր
Միկիչ Նիկիտիչի ու մաշինիստիկի վրին Վոնց ել
սամթին քաշել ին դրանց նկարները: Այ քեզ
նսնսլթ: Մենակ ե՞զ եր. մենակ եզ ըլեր, ելի հեչ,
եզ իմ նութի կշտին ելի մի ուրիշ նսնսլթ: Ո՞վ եր
գրել՝ չիմացա: Համա ինչ նութ, Միկիչ Նիկի-
տիչի տունը քար ու քանդ ին արել: Գրել ին,
թե եսքամ փող ա մեջտեղում կորել, եսքամ
դուր տեղը ծախսվել, ել բյուրոկրացի, ել վա-
լայտիկա, ել խնամուկթյուն, սիլի-բիլի, վճրն ա-
սեմ:

Եկավ Միկիչ Նիկիտիչը: Վոնց եկավ: Տե-
ղովը կրակ ու կարկուտ: Բոմբի դաչդի տրաքվեց,
ու պլիմոտրի դաչդի վրա տվեց: Ականջ անողն ո՞վ:

Ասավ ու ասավ, մաղեց ու թափեց, ընչանք
փրփուրը բերանը վե կալավ:

Են խեղճ մաշինխտկեն ել, նոթերը կխտած,
գլուխը քաշ արած, կուչ ա եկել իրա պուճա-
խումը, վոչ ձեն ա հանում, վոչ բան, ասես
խեղճի մերը նոր ա մեռել ու սգի մեջ ա: «Հը՛,
դուշկա-մուշկեն վո՞նց ա» — ասի մտքումս:

Միկիչ Նիկիտիչն եդ որը գործի չնստեց:
Առավ պորտֆելը ու փրփուրը բերնին, դուս գը-
նաց: Են մաշինխտկի բանն ել դհա փսացավ:
Դիփ նրան են թամաշ անում, նա չեյ վոչ որի
հետ չի խոսում. ու ճակատը ձեռներին դրած՝ կուչ
ա եկել իրա մաշինի կշտին:

*
* *

Եքսի առավոտան իրեք հոգի եկան: Բանվո-
րա-գլուղացու կամխարիցն ին: Եկան, առան
մեր Միկիչ Նիկիտիչին, գլավբուխկին ու մտան
կարինետը: Մին քրքրեցին, մին հուզ տվին, կար-
մրացրին դրանց ու վրա չեգրորդ որը գնացին:
Համա են ել ասեմ, վոր եդ եկողների ձեռներին
իմ ու մեկ ել են ուրիշի նոթերն ին:

Միկիչ Նիկիտիչին քամեցին, կակղացրին.
«Դուշա-մուշկեն» ել ձեռից գնաց:

*
* *

Իրեք որ չեղը սաղ աշխարհի վրին արև

բացվեց, համա մեր Միկիչ Նիկիտիչի ու գլավ-
բուխկի վրին՝ խավար:

Միկիչ Նիկիտիչին ել կուսակցութունից հա-
նել կուզես, ել գործից հանել կուզես, ել դատի
տալ կուզես:

Ինքը բու-բու կերել եր՝ բու չի, են «գուշկա-
մուշկի» վրին ծախսել եր՝ բու չի, հլա գլավբուխ-
կին ել ջուկ եր կերցրել: Հայ գիդի Միկիչ Նի-
կիտիչ...

Են խեղճ «գուշկա-մուշկի» ունզն ու ոուշը
թուել եր տեղից, ու թնկթնկալով, լացը աչքե-
րին, իրա դարդերն ինձ ա պատմում—

— Ախ, մեր Միկիչ Նիկիտիչը, ախոսս
մարդ եր:

— Ախ մեր Միկիչ Նիկիտիչը...

ԻՆՃԵՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՐ

I

Յերիտասարդ ճանապարհորդը ճողոպրեց կա-
ջարանի դռների մոտ ալեկոծվող ամբոխից: Ա-
զատեց իր հնամաշ վերարկուի փեշը նրա ճի-
րաններից: Ուղղվեց: Չնայած դեռ չերկար ժա-
մանակ եր մնում մինչև դնացքի ուղևորվելը, նա
համարյա վազելով հասավ տոմսակում նշված իր
վազոնին, հեալով բարձրացավ կարճ սանդուխքը,
ցույց տվեց տոմսը և մտավ չերկրորդ կուպեն:

Արդեն հոգնել եր:

Կուպեյում դեռ վոչ վոք չկար:

Ձեռքի փոքր ճամպարկը նետեց վերևի ցան-
ցապատ դարակի վրա, ճմրտելով նետեց գլանա-
կի մնացորդը, հազաց և սկսեց տենդոտ ու սպա-
սողական չերթևեկել կուպեյի չերկայնքովը:

Նա մտածկոտ եր:

Ասես ուզում եր միանգամից իմանալ, թե
ձև հետ ե վիճակվելու ճանապարհորդել այդ
կուպեյով, ի՞նչ մարդկանց ուղեկցուլթյամբ, ի՞նչ
սեռի ի՞նչ տարիքի:

Նյարդոտորեն շփեց ձեռների ափերը:

Քալեց տենդոտ ու արագ:

Ապա հանեց գրպանի թերթը, նայեց խոշոռատառ վերնագրերին: Ներքևի տեքստերը չըկարդաց: Շրջեց բոլոր չերեսները: Դիտեց, վոչ թե կարդաց: Ապա ճմրտելով ծալեց և դարձյալ գրպանը դրեց:

Վերարկուն կախեց մեխից: Հանեց գլխարկը: Մազերը սանրեց: Ուղղեց ոճիքը, փողկապը: Քալեց: Քալեց:

Նստեց:

Յելավ դարձյալ և քալեց տենդոտ ու սպասողական:

Ճամպարկղից հանեց կաշարանում գնած, գունագեղ արտաքինով ռոմանը, խնամքով կրտրատեց: Ուշադրությամբ դարձյալ դիտեց նրա զարգանկարված կողերը, շուռ տվեց և սկսեց կարդալ:

Քիչ չափով կարդում եր, շատ չափով դուրս եր նայում պատուհանից:

Ուշացրիվ, սպասողական:

II

Բեռնակիրը տնքալով ներս մտավ:

Դրեց ճամպարկղներ ու կապոցներ և չերկարաշունչ հևաց: Նրան հետևեցին մի բարձրահասակ ու բարեկազմ, չերիտասարդ տղամարդ,

գեղին կոճակներով և ինժեներական գլխարկով
և ապա մի գեղեցկագեմ կին:

Յերիտասարդ ճանապարհորդը դիտեց զաղ-
տագողի, ստուգեց և շարունակեց զբաղվել իր
ռոմանովը:

Բեռնակիրը նորից տնքաց ու տեղավորեց
ճամպարիկները, լիուլի ստացավ իր հասանելիքը,
գլխարկը հանեց, կոտրատված ռուսերենով շնոր-
հակայություն հայտնեց ու հեռացավ:

Յերիտասարդ ճանապարհորդը կարգում ու
նայում էր:

Ինժեներն ու իր կինը տեղավորվեցին:

Գեղեցկագեմ կինը հանեց հաստ վերարկուն,
բլրաձև գլխարկը, սանրեց մազերը, ռեզիկուլի
կափարիչի հայելու մեջ ստուգեց դեմքը, շըր-
թունքները և մեջքից վերև կոտրատվելով ու
դժգոհ տոնով ամուսնուն դարձավ.

— Կոճիկ, իսկ ո՛ւր ե, դեռ շատ հեռու չե
այդ քո Այ-լա-վերդին...

— Վո՛չ: Շուտով,

— Քանի՞ ժամից:

— Դե չես ի՛նչ իմանամ:

— Իսկ այս Թիֆլիսը լավ քաղաք ե, Կոճիկ...

— Լավ:

— Իսկ մե՞ծ ե:

— Վոչի՛նչ:

— Վոր ացղպես ե, դու ինչո՞ւ այստեղ աշխատանք չվերցրիր և գնացիր հասար ինչ վոր Ալ-լահ-վերդի, վորի տեղը քարտեզումն ել հայտնի չի...

Ամուսինը սլատասխանեց լուռթյամբ:

Յերիտասարդ ճանապարհորդի աչքերն ավելի շուտ ինժեների կնոջ դեմքն ու իրանն ելին կարդում, քան ռոմանի եջերը: Դե, ռոմանումն ել, հազիվ թե նրա նման գեղեցիկ ու հետաքրքիր հերոսուհու պատահեր նա:

Նայում եր գրքին, չերբ ուղեկիցների հայացքները դեպի ինքն ելին դառնում, և գեղեցկադեմ կնոջն եր կարդում, չերբ նա ու ամուսինն զբաղված ելին խոսակցությամբ:

Նայում եր գրքին և ինժեների կնոջ դեմքն եր կարդում:

Կինը նորից նայեց հայելուն: Շուռ չեկավ դեպի պատը: Քավեց:

Ինժեները գրպանից հանեց Անդրկովկասյան կենտրոնական թերթը և սկսեց կարդալ «Բանգլուդտեսչության թերթիկը»:

— Կո՞ծիկ... Կո՞ծիկ, դե ել ի՞նչ սկսեցիր ելի, խոսիր...

Կինը փոքրիկ ճամպարկղից հանեց և շուրջը շարեց տուփերով ու փոքրիկ տոպրակներով քաղցրավենիք, կանֆետ, շոկոլադ, իրիս:

— Կո՛ծիկ, բավական ե... Կո՛ծիկ, դե կե՛ր...

— Լա՛վ:

— Կո՛ծիկ, դե վե՛րջ տու՛ր...

— Լա՛վ:

— Կո՛ծիկ, քեզ հե՛տ եմ ե՛ ..

— Լա՛վ:

— Ամբողջ ուրը կարդում ես .. դե բավական
ե... Կո՛ծիկ...

— Լա՛նա՛նավ ..

Ամուսնու պատասխանի տոնն ստիպեց նը-
րան լռել: Նա թեքվեց դեպի յերիտասարդ ճա-
նապարհորդը, յերկարեց նրան շոկոլադի տուփը
և փաղաքշական տոնով նրան դիմեց. —

— Վերցրե՛ք խնդրեմ:

Ինժեները նայեց աչքի տակով:

— Շնորհակալութ՛յուն, — ասավ ճանապար-
հորդը և բթամատի ու ցուցամատի ծայրերով,
մեծ զզուշութ՛յամբ, տուփից վերցրեց շոկոլադի
մի փոքրիկ կտոր, ասես մատներով նա վերցնում
էր մի վերին աստիճանի նուրբ ու թանգազին
էր, վորը կարող էր փշրվել փոքրիկ իսկ հպու-
մից անգամ:

Կնոջ ինքնասիրութ՛յունն այնքան չվարձա-
տրվեց յերիտասարդ ճանապարհորդի կողմից աս-
ված «շնորհակալութ՛յուն» բառից, վորքան այն

քնքուլը ու շոյող տոնից, վորով ասվեց այդ բա-
ուր և այն բարչացական հայացքից, վորի ուղեկ-
ցութեամբ ասվեց այդ բաուր:

Կինը թեթև ժպտաց:

— Կո՞ծիկ, դե կե՞ր...

— Իսկո՞ւն:

Յերիտասարդ ճանապարհորդն ափսոսալի
հայացքով դեպի ինժեների կինը դարձավ: Այդ
հայացքով կարծես նա ցավում եր այն կոշտ ու
անսիրաշահ վերաբերմունքի համար, վորին ար-
ժանանում եր այդ կինը: Այդ հայացքով նա կար-
ծես ավելին եր խոստանում այդ կնոջը և ափսո-
սանքով ասում— «մարգարիտը խողի առաջ են
թափել»:

Ինժեները կարդում եր:

— Կո՞ծիկ, դե բավական ե... կե՞ր...

— Շուտո՞վ:

— Կո՞ծիկ, իսկ լսի՞լ տեղ ե այդ Ալ-լա-վեր-
դին...

— Լսի՞լ, շուրջը լեռներ ու ժայռեր:

— Ո՞չ, ո՞չ, ո՞չ,— ուրախ ու սրտանց բացա-
կանչեց կինը, փալտուն վոտներն արագ-արագ
գետնին խփելով:

— Կո՞ծիկ, իսկ մե՞ծ քաղաք ե...

Պատասխան չեղավ:

Ինժեները կարդում եր խորասուզված ու

ինքնամփոփ: Կնոջ խոսքերը կարծես տաղտկալի հեքյաթի հարյուրերորդ անգամվա կրկնությունը լինեցին: Չեր լսում:

— Քաղաքացի, — սիրալիբ տոնով չերիտասարդ ճամբորդին դիմելով, հարցրեց կինը, — դուք իմանո՞ւմ եք Ալ-լա-վերդի...

— Այո, — պատասխանեց նա ինքնավստահ, ու պիջակի կրծքամերձ գրպանից հանեց շորս տակ ծալած մետաքսե թաշկինակը և իբր թե ճակատի քրտինքը սրբեց:

— Իսկ մե՞ծ քաղաք ե...

— Վո՛չ... Ժպտաց նա:

— Ինչպե՛ս...

Ինժեները հանդիմանական տոնով անծանոթ ուղեկցին նաչեց, կարծես ուղուժ եր հասկացնել, թե քո ինչ գործն ե, վոր մեր «ներքին» խնդիրների մեջ ես խառնվում:

— Կո՞ծիկ, Կո՞ծիկ... լսում ես:

«Կոծիկը» կարդում ե:

— Իսկ լավ ուստորաններ կան, — չերիտասարդ ճանապարհորդին դառնալով, շարունակեց կինը:

— Այնքան ել լավը չի: Բանվորական կոոպերատիվինն ե:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, Կոծիկ, իսկ դու ի՞նչ ելիբասում... Կոծիկ, լսում ես:

«Կոծիկը» կարդում ե:

— Իսկ թատրոն կամ անտեղ:

— Յերբեմն լինում ե: Բանվորական դրամ-
խմբակը չերբեմն խաղում ե:

— Ո՛ր, ո՛ր, ո՛ր, մաման, չես կորած եմ, Կո-
ծիկ, լսում ես, թատրոն ել չկա... բանվորներն
են խաղում: Իսկ դու խաբում ելիր: Յես ասում
ելի Կովկաս կգնանք... ո՛ր, ո՛ր, ո՛ր, մաման, չես
կորած եմ. . մաման, մաման...

— Շոկոլադ կերեք, — փոքր ինչ հետո, ընկ
ճված տոնով չերխտասարդ ճանապարհորդին դի-
մեց նա:

— Շնորհակալութուն:

— Կոծիկ, դե թող ի սերն Աստուծու... լսիր
թե ի՞նչ ե պատմում, իսկ դու ուրիշ բան ելիր
ասում...

Ռոմանը հանգչում ե կիսաբաց: Յերխտա-
սարդ ճանապարհորդն իր ուղեկցուհովն ե տար-
ված: Նաչում ե ժպտում ե:

Ինժեները կարդում ե:

— Ասացեք խնդրեմ, իսկ սպերա, հո կմ
ալդ Ալլա-վերդում...

— Վ՛նչ, --- զարմացկոտ ու ժպտալով պա-
տասխանեց չերխտասարդ ճանապարհորդը:

— Աստված իմ, աստված իմ, Կոծիկ, Կո-
ծիկ, լսում ես... Ո՛ր, ո՛ր, ո՛ր, մամա, մամա... Իսկ

դու ասում ելիր, թե ոսկերան չեղ կա... սյ, սյ, մամա, չես կորած եմ... խաբեբան դու... Յես ասում ելի չեմ գա կովկաս... Ամեն բանում խաբեցիր... Յես ինչպես, ինչպես ապրեմ առանց սպերալի... սյ, սյ, սյ, մամա, ոգնեցեք, ոգնեցեք... կոճիկ, դե թող վերջապես, լսիր, թե ի՞նչ ե ասում...

Ջղաջնորեն նա խլեց ամուսնու ձեռքի թերթը, ճմլկտեց, նետեց հատակին, ապա սկսեց հեկեկալ, արհեստական կերպով ցնցելով մարմինը:

Ինժեները հաշացքներով անարգում եր չերիտասարդ ճանապարհորդին, վորն անկոչ կերպով մեջ ընկավ, խառնվեց նրանց ընտանեկան դործերին ու բաց արեց իր «գաղտնիքները»:

Կինը փոքր ցնցումներից հետո հեկեկոցն ընդհատեց: Սրբեց աչքերը, վորոնք բոլորովին չոր ելին: Նայեց ռեդիկուլի հայելուն: Շուռ չեկավ դեպի պատը: Քավեց:

— Իսկ շուտով կհասենք այդ Ալ-լավերդիին... — հուսահատական ու վերջին բառի նրկատմամբ արհամարհական սոնով հարեց նա:

— Դեռ բավական ճանապարհ կա, — պատասխանեց չերիտասարդ ճանապարհորդը:

— Ո՛յ, սյ, սյ, կոճիկ, լսում ես, կոճիկ, դե թող... կոճիկ, բավակա՞ն ե...

— Իսկ քեզ անհրաժեշտ ե քնել, հանգստա-

նալ մինչև տեղ հասնելը, խիստ տոնով ասավ
ինժեները:

— Իսկ դ՞ու...

— Յես նու. ճապես:

— Դե քնհնք: Դու չե՛լ քնիր: Դու վերև, չես
ներքև: Լավ:

— Լավ:

— Դե բարձրացիր:

— Դու պառկիր, իսկ չես քիչ հետո: Պետք
է նայեմ այս գիրքը:

— Չե՛, Կո՛ծիկ, միասին, միասին...

Ուրիշ ի՞նչ կարող ես անել:

Ինժեները բարձրացավ և չերկարվեց վերե-
վում, բայց ընթերցանութունը շարունակում եր:
Կարդում եր հանքագործության նվիրված մի
հաստափոր գիրք:

— Կո՛ծիկ...

— Կո՛ո՛ո՛ծիկ...

— Հը՛...

— Ելի՞ կարդում ես:

— Վո՛չ:

— Կո՛ծիկ, ստում ես, Կո՛ծիկ, դե բավական
է, դե քնիր: Խարեբա՛... Լիմ քունն ել չի տա-
նում... Յես ի՞նչպես ապրե՛մ առանց թատրոնի՛,
ոպե՛րալի...

— Կո՛ծիկ...

Առավոտն է մտանում:

Աստղերը մահամերձորեն հեկեկում են, թարթում իրենց ադոտ աչքերը և շքանում:

Կապտաժեռ չերկնակամարը դալկանում է:

Գնացքը վոլորապտույտ սահում է Լուվա ձորերով, ծխում ու կանչում զիլ և արձագանքող, մետաղե ձայնով:

Հանդիպակաց լեռներն ու ժայռերը շարվել են հավասար և ճանապարհ են տալիս նրան, ասես հսկայական զորաբանակն է քարացել բարևի ժամին:

Նորից ժայռեր, իրար հենված, իրար վրա կուտակված: Անառիկ ու խրոխտ:

Ասես հսկայական ծխամորձ, ապառաժե շրթնունքներով սեղմված, ծխում է բարձրաբերձ ծխնելույզը:

Գնացքը մորթվող անասունի նման վերջին, կերկերուն ճիչ արձակեց ու կանգ առավ:

Խնժեները հավաքում եր իրերը:

Կինը հազնվեց: Ստուգեց դեմքը հաշելու մեջ: Քավեց:

«Ցտեսութլուն» ասեց լերիտասարդ ճանապարհորդին:

Նա լերկա՛ր ու ավստասլի հաչացքով նաչեց

զեղեցկադեմ աչգ կնոջ չեանից: Կարոտագին,
կարոտագին: Իբ աչգ հաչացքով նա կարծես զարձ-
չալ ասում եր—«Ափսոս. մարգարիտը խողի ա-
ռաջն են թափել»:

Ինժեներն ու իր կինն իջան գնացքից:


Շուրջը լեռներ: Ու նրանց ապառաժե շր-
թունքներում սեղմված, հավիտենական հսկա
պլանակի նման, ծխում է հանքերի ծխնելուզը:

Լեռներ: Լեռներ:

Ինժեները գնում եր աշխատանքի:

1929 թ.








Ց Ա Ն Կ

	Եջ
1. Մագիլներում	3
2. Իսակ Իվանիչը փակա ջարդի	21
3. Յերկու գուլգ շրթունքներ	29
4. Մեր Միկիչ Նիկիտիչը	33
5. Ինժեները գնում էր	42









[204]

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0040536

A ^I 5120